ՀԱՅ ՄԱՐԶԱՄԱՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ՆԱՅԻՐԻ» ՄԻՈՒԹԻՒՆ
انجمن فرهنگی-ورزشی نائیری

11 մայիս 2022

18-53

Իրանում Հայաստանի Հանրապետութեան
արտակարգ և լիազօր դեսպան
Յարգելի պրն. Արսէն Աւագեան

Անժխտելի իրականութիւն է այն, որ տասնամեակներ շարունակ, սփիւռքը եղել է սերունդներ դաստիարակող եւ հայրենիքից դուրս ծաւալում է ազգային , կրօնական , հայրենասիրական, հայ ժողովրդի գոյութեան իմաստը վերապահող իր իրաւունքների պահպանման ուղղին հետապնդելու գրաւականը:

Փաստօրէն սփիւռքում կէս դարից աւելի է , որ բոլոր ուժերը դրւել է ի սպառ հայ դատի հետապնդման, ի խնդիր մեր պատմական հայրենիքի բռնագրաւած հողերի ազատագրութեան եւ միացեալ հայրենիքի ու ամբողջական հայութեան կերտման:

Այս օրերում հայրենիքի սահմաններին է հասել մեր դարաւոր թշնամին եւ լուրջ մտահոգութիւն է առաջացրել սակայն միւս կողմից ներկայ իշխանութիւնն էլ կանխարգելման առանձնայատուկ միջոցներ չի ձեռնարկում: Նկատելի է Հայաստանի ներկայ իշխանութեան պարտւողական քաղաքականութեան դէմ ըմբոստանալու արտայայտութիւններն ու վարչապետի հրաժարականը պահանջով տեղեկացնող ժողովրդի խաղաղ ցոյցերը:

Դատապարտելի է ոստիկանութեան կողմից անմարդկային եւ բիրդ վերաբերմունքը ցուցարարների նկատմամբ, դա մարդկային իրաւունքների ոտնահարում է եւ չի կարելի ժողովրավարութիւն համարել: Կատարւածը անմարդկային վերաբերմունք է եւ դատապարտելի:

Թեհրան, Մաջիդիէ, Ասնա Աշարի պող.,
Ջառինոդբայի պող., համար 146
Հեռ.՝ 22510128, 22306566
Ֆաքս՝ 22316957
www.nairi.ir info@nairi.ir

تهران، مجیدیه، خیابان زرین قبائی، پلاک ۱۴۶
تلفن: ۲۲۵۱۰۱۲۸-۲۲۳۰۶۵۶۶
فکس: ۲۲۳۱۶۹۵۷

Scanned by Easy Scanner

Այսպիսով մեր բողոքի ձայնն ենք միացնում ցուցարար մեր հայրենակիցներին եւ պաշտպանում նրանց պայքարի ուղղին եւ դատապարտում ենք Հ.Հ. իշխանաւորների որդեգրած ազգակործան քաղաքականութիւնը:

Յարգանօք՝

Հ.Մ.Մ. «Նայիրի» միութեան

վարչութիւն

Նախագահ՝ Սերոժ Օհանեան

Քարտուղար՝ Ռուբինա Աւագեան

Թեհրան, Մաջիդիէ, Ասնա Աշարի պող.,
Զառիճղոբայի պող., համար 146
Հեռ.՝ 22510128, 22306566
Ֆաքս՝ 22316957
www.nairi.ir

تهران، مجیدیه، خیابان زرین قبائی، پلاک ۱۴۶
تلفن: ۲۲۵۱۰۱۲۸-۲۲۳۰۶۵۶۶
فکس: ۲۲۳۱۶۹۵۷
info@nairi.ir

Scanned by Easy Scanner